ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ն

19 հունիսի 2017 թվական գյուղ Նահապետավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի թիվ 344-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 05-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (շենքերի և կառույցների ընթացիք նորոգում և պահպանում) 4251 հոդվածի 960 000 /ինը հարյուր վաթսուն հազար/ դրամ թիվը և բառերը փոխարինել 1 393 000 /մեկ միլիոն երեք հարյուր ինսուներեք հազար/ դրամ թվերով և բառերով:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 3, դաս 1 (համայնքի ջրամատակարարում) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) 4251 հոդվածի 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ թիվը և բառերը փոխարինել 900 000 /ինը հարյուր հազար/ դրամ թվերով և բառերով:
3. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) 4891 հոդվածի 3 923 000 /երեք միլիոն ինը հարյուր քսաներեք հազար/ դրամ թիվը և բառերը փոխարինել 3 090 000 /երեք միլիոն ինսուն հազար/ դրամ թվերով և բառերով:

Ավագանու անդամներ՝

Կողմ-3	**Դեմ-0**	**Ձեռնպահ-0**
Գրիգորյան Արտավազդ		
Թադևոսյան Կարեն		
Պետրոսյան Մխիթար		

Նահապետավան համայնքի ղեկավար՝ Գ.Պետրոսյան

19 հունիսի 2017թ.
գ.Նահապետավան